



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ «ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ»Ի ՄՐՑԱՆԱԿԸ ՊԻՏԻ ՇՆՈՐՀԷ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՕՐ

Հայ Դատի յանձնախումբին տարեկան ձեռնարկը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 7-ին, Sheraton Universal պանդոկին մէջ, Universal City:

Պիտի պատուընդին Հայ Դատին զօրակից՝ ազգայիններ, պետական ղեմքեր եւ գաղութի ծառայողներ:

Այս առիթով, Հայ Դատի Յանձնախումբը առաջին անգամ ըլլալով «Խրիմեան Հայրիկ»ի մրցանակը պիտի շնորհէ Առաջնորդ Սրբազան Հօր, շրջանի հայ համայնքին իր տասնամեակներու սպասարկութեան համար, թէ համայնքին հոգեւոր կարիքներուն հասնելով եւ թէ իր դերակատարութիւնը ստանձնելով Հայ Դատի պաշտպանութեան աշխատանքներուն մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները: Ներկայ պիտի ըլլան Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան եւ Ժողովականութեան անդամներ:

### PRELATE TO BE BESTOWED "KHRIMIAN HAYRIG" AWARD AT ANCA-WR ANNUAL BANQUET

On the evening of Saturday, November 26<sup>th</sup>, the annual ANCA-WR banquet will be held at the Sheraton Universal Hotel.

Each year, the ANCA-WR honors individuals who have demonstrated commitment and dedication to furthering the Armenian Cause.

The Prelate is among this year's honorees, and will be bestowed with the first ever "Khrimian Hayrig" award for his decades of spiritual leadership and efforts as an advocate of truth, justice, and human rights.

The Prelate will be in attendance to receive the award and will convey his blessings.

\*\*\*

ՀԱՆԳԻՍՏ Տ. ԶԱԼԵՆ ԲՅՆՅ. ՓՕԼԱՏԵԱՆԻ



Արեւմտեան Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան,  
Հոգեւորականաց Դասը,  
Կրօնական Ժողովն ու  
Ազգային Վարչութիւնը  
այսու կը գուժեն Հայց.  
Առաքելական եկեղեցւոյ ու  
Մեծի Տանն Կիլիկիոյ Ս.  
Աթոռոյս բազմավաստակ ու  
նուիրեալ  
սպասարկուներէն՝ Տ. Չաւեն  
Քիւյ. Փօլատեանի  
վախճանումը, որ

պատահեցաւ Ուրբաթ, 18 Նոյեմբեր 2011ին:

Այս տխուր առիթով, Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութիւնը  
ցաւակցութիւն կը յայտնեն վախճանեալ Տեր Հօր զաւակներուն՝ Ժողէֆի,  
Յասմիկի եւ Սօսիի ու անոնց ընտանեկան պարագաներուն, հայցելով Ս.  
Հոգւոյ մխիթարութիւնը:

Վախճանեալ Տեր Հայրը ծնած էր Քեսապ, 1930ին: Բահանայ  
ձեռնադրուած է 1964ին: 1965էն մինչեւ 1972 ծառայած է ծննդավայրին մէջ,  
ապա՝ Ատրպատականի մեր Թեմէն ներս: 1973էն մինչեւ 1984, Տ. Տ. Խորէն  
Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ, ծառայած է Իրաքի մէջ, Պաղտատ եւ  
Քերքուք, իսկ 1984էն 1986՝ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Սէյնթ  
Լուիս քաղաքին մէջ: 1986ին հաստատուած է Արեւմտեան մեր Թեմը, ուր  
հանգստեան կոչուած ըլլալով հանդերձ, հաւատարմօրէն ու ամենայն  
պատրաստակամութեամբ իր ծառայութիւնները ի սպաս դրած է ազգային  
Առաջնորդարանիս:

Տեր Հօր յուղարկաւորութիւնն ու վերջին օծումը տեղի ունեցաւ  
յընթացս Ս. Պատարագի, նախագահութեամբ եւ ձեռամբ Առաջնորդ  
Սրբազան Հօր, Չորեքշաբթի, 23 Նոյեմբերին, Կլետեյլի Ս. Աստուածածին  
եկեղեցւոյ մէջ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

## IN MEMORIAM REV. FR. ZAVEN POLADIAN

With deep sorrow H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate,  
Clergy members, and the Religious and Executive Councils announce the  
passing of Rev. Fr. Zaven Poladian which occurred on Friday, November 18,  
2011.

Fr. Zaven was born in Kessab in 1930. He was ordained a priest in 1964  
and served in Kessab from 1965 to 1972, then briefly in the Azerbaijan Diocese.  
By the ordinance of Catholicos Khoren I of blessed memory, from 1973 to 1984

Fr. Zaven served in Iraq, and from 1984 to 1986 in St. Louis. In 1986 Fr. Zaven settled in Los Angeles, and although retired, he was always ready to serve when the need arose.

The Prelate and Councils extend their condolences to Fr. Zaven's children Joseph, Hasmig, and Sossy and their families, praying for the Holy Spirit to grant them comfort and strength.

Extreme Unction took place during funeral mass conducted by the Prelate on Wednesday, November 23<sup>rd</sup> at St. Mary's Church in Glendale.

May his memory remain ever blessed.

\*\*\*